

եանի բացատրութիւնները ապացուցանում էր յայտնի երդուեալ հաւատարմատար Պ. Դ. Միքոնով:

Սենատը, լսելով ներկայ դործը և օքէր-պլոկուրօրի եղրակացութիւնը, որոշեց. — Թիֆլիսի դատաստանական պալատի վճիռը վերոյիշեալ հարցի վերաբերմամբ հաստատել, անհետեանք թողնելով կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի վճռաբեկ դանդատը:

Այդիսով, սրանից յետոյ հայոց կօնսիստօրիաների կողմից սկսած բոլոր վէճերը կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան դէմ վերջնական լուծումն կը ստանան սովորական դատաստանական կարգով, որոնց մէջ դործերի մեծամասնութիւնը արդէն լուծված է ի նպաստ հայոց Եկեղեցու, բայց միայն դատարանի առաջին բնստանցիայում և ներկայումս այդ դործերը դժուար են դատաստանական պալատում կովկասեան ուսումնարանական շրջանի բողոքարկու դանդատներով:

(Արտապուրիւն «Մշակից»):



## ՂՈՒԿԱԾԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԿԲՏԻԶ ՇԱռայ Քըխտոսի և Անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Շայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արաքատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Պատուարժան Անդամոց մնայուն Յանձնաժողովոյ կըօնա-պատմական Թանգարանի Վանաց աւագ Եկեղեցւոյ Հայոց Տիվիսկայ, կառուցելոյ ի մեծարդոյ պ. Աւետիքայ Բ. Ղուկասեան, հարազատիցդ Մայր Աթոռոյսնուիրեմք ողջոյն և օքնութիւն Հայրապետական:

Ի յայտարար գրութենէ Յանձնաժողովոյդ՝ մատուցելոյ Մեղյան նոյեմբերի անցելոյ ամի, հաւասար եղաք, զի բարեպաշտօն պ. Աւետիք Բ. Ղուկասեան ի 20-ն յուլիսի նոյն ամի գրութիւն Հայրապետական:

թեամբ յանուն Դորին, որպէս և Մեր, նուիրեալ է ի տարին հինգ հասկը ռուբլիս առ ի յատկացուցանել մըցանակի հայերէն երկասիրութեանց, զորպիսի գումարն մշանջենապէս ապահովեալ է կտակաւ իւրով և որոյ գործադրութիւն իսկ յանձնեալ է Յանձնաժողովոյդ։ Սրգ՝ ի նկատ առեալ Մեր զարժանին գոլութեան զնակատակին պահութեանունողին զայն կարենոր հաստատութիւն և կտակ, կարենոր համարիմք այսու Հայրապետական Առնեակաւ Մերով որոշել առ այդ բաշխումն մըցանակի զհետեւեալ կանոնս ի պահպանութիւն ապագայ ժամանակաց և ի կատարումն, որը են։

Ա. Աւետիս Ղուկասեանի նուիրաբերութեամբ հաստատուած մըցանակը կըկոչուի «Ղուկասեան մըցանակ» յանուն նուիրաբերողի։

Բ. — Մըցանակը կըտրուի ամեն տարի Ապրիլի 7-ին ս. Կուսի Աւետման տօնին։

Գ. — Ղուկասեան մըցանակի նիւթը պէտք է պատկանի հայ լեզուի, հայ գպրութեան կամ հայ պատմութեան ճիւղերին։ այն է՝ հայոց լեզուի և գրականութեան հետազօտութիւն, հին հայ մատենագիրների թարգմանութիւն լուսաբանութիւններով կամ բանասիրական քննադատութիւններով ճոխացրած, աղդային կամ եկեղեցական պատմութեան լուսաբանուած հատուածներ, հայաքնակ գաւառների աշխարհագրական տեղադրութիւն, աղդային դեղաբուեստի հետազօտութիւն, հայ օրէնսդիտութեան կամ կանոնագիտութեան վերաբերեալ տեսութիւններ և այլն։

Դ. — Մըցանակի չեն կարող ներկայացուիլ։ 1. օտար լեզուներից թարգմանութիւններ։ 2. գասագբերեր։ 3. մի անգամ արդէն որևէ աղդային հաստատութիւնից վարձատրուած երկեր։ 4. հին մատենագրութեանց պարզ տպագրութիւններ։ 5. մըցանան ժամանակից երկու տարի առաջ տպագրուած գործեր։

Ե. — Մըցանակի կարող է մատնակցել ամեն անձ, հայ կամ օտարազդի, բացի գրական Յանձնաժողովի անդամներից։

Զ. — Ներկայացուած գործերը պէտք է հայերէն լինին՝ գրաբառ կամ աշխարհաբառ, ձեռագիր կամ տպուած։ տպագիրները հնդական։ իսկ ձեռագիրները մէկ օրինակ, բայց շատ մաքուր գրուած։

Է. — Յիշեալ պայմանների համաձայն պատրաստուած եղեկասիրութիւնները պէտք է մըցանակի թուականից հինգ ամիս առաջ ուղարկուին մըցանակի Յանձնաժողովին, որ քննութեան

ենթարկուին։ հակառակ գէպըում կըմնան մինչեւ միւս բաշխումը։

Ը. — Դուկասեան մրցանակի գործադրութիւնը, նույրաքերողի ցանկութեամբ, յանձնուած է թանգարանի Մնացուն Յանձնաժողովին, որ կազմուած է մի եկեղեցական և երեք աշխարհական անդամներից, թեմի Առաջնորդի նախագահութեամբ, և ոչ ուրիշ հոգեորականի լինի նա կառավարիչ կամ նախանդամ Տիկիսիում։ Յանձնաժողովի անդամները նշանակուած են ցահ, իսկ որևէ անդամի մահից յետոյ նորա փոխարէն ընտրւում և նշանակուում է այլը Հայրապետի կոնդակով։

Թ. — Յանձնաժողովը պիտի կատարէ ներկայացուած երկասիլութեանց նախական քննութիւնը։ Եթէ մրցման պայմաններին յարմաք գտնէ՝ կըյանձնէ մատնագէտ և կարող անձանց քննութեան, որոնք կարող են լինել թէ Յանձնաժողովի անդամներից և թէ արտաքոյ նոցա։ Նոցա տեղեկագիրներն ընդունելով՝ Յանձնաժողովը լրացնում է քննութիւնը և վերջնաբար որոշում մրցանակը։

Ժ. — Մրցանակի հինգ հարիւր ըուբլին պէտք է ամբողջապէս տալ արժանաւոր երկասիլութեան։

ԺԱ. — Եթէ իւր ժամանակին չներկայացուի որևէ աշխատութիւն և կամ ներկայացուածները մրցանակի արժանի չեն, մրցանակի գումարը պիտի գործ դնուի նախնեաց ընտիրմատենագրութեանց տպագրութեան վերայ, որպիսի հրատարակութեանց եկամուտը յատկացնուում է թանգարանին։

ԺԲ. — Մրցանակի պայմանների մասին պէտք է կանխապէս յայտարարել Ռուսիայի և արտասահմանի լրագրներում, իսկ մրցանակաբաշխութեան հետեւանքի մասին յանձնաժողովը հրապարակաւ հաշիւ է տալիս տպագրութեամբ և իւրաքանչիւր տարի գեկուցում է ներկայացնում Թանգարանի հովանաւոր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին։

Ցետ որոշման կանոնաց աւանդեմք սիրեցեալ որդւոցդ, արդի և ապագայ անդամոց Մնացուն Յանձնաժողովոյդ ուշի ուշով և անկեղծ ոգւով կատարել ճշտութեամբ զհաստատեալ կանոնս, որ կատարելապէս համաձայն է նպատակի ազգասէր բարերար Հիմնադրին։

Եւ մեք օրհնելով զէիմնադիրն թանգարանին զպ։ Աւետիսն Բ. Դուկասեան հանդես ընտանեօք և միակ ժառանգաւ, ասեմք «Յիշատակ բարերարին օրհնութեամբ եղիցի»։

Օրհնեալ եղիցին և անդամք Յանձնաժողովոյն, տքնողք և

վաստակողք յայս մեծ գործ և որք առ յապայն գործեցք և պետանիք հանդիսանան հաստատութեանս:

Մնամք ի սրտէ օրհնող բարերարաց ազգիս և ցանկացող ընդ յառաջադիմութեւն սիրեցեալ զաւակացու Ս. Հօրն Մերոյ Գրեգորի Կուսաւորչի, կամք մնամք խոնարհ Աթոռակալ նորին

ՄԿՐՏԻՉ ԿԱՅՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս Հայրապետական յամի շնորհաց Փրկչին 1902 ի 24-Ն յունուարի և ըստ տոմարիս ՌՅՆԲ ի Հայրապետութեան Մերում Թ. ամի յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի ի Վաղարշապատ. Համար 101.



## ՏԱ ՃԿԱՀԱՅՔ

### ՄԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Այս պահուս, երբ Սանասարեան վարժարանի Կ. Պոլսոյ ինսամակալութեան սեղանի վրայ կը գտնուի Էրզրումի տեղական Հոգաբարձութեան մատուցած քսանամեայ տեղեկագիրը, որուն ուսումնասիրութեամբ կը զբաղի խնամակալութիւնը և միենոյն ժամանակ Խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան այդ հաստատութիւնը՝ Խարբերդ Սորոսրի վանքը տեղափոխելու, կ'արժէ որ լուրջ և անկողմնակալ ոգուզ պարզուի Սանասարեանի արդի վիճակը և կտրուկ տնօրինութիւններ ըլլան միանգամ ընդ միշտ բառնալու տրտունջի առիթներն ու վարժարանը իր անունին և նպատակին համապատասխանող գիրքի մը վերածելու, ինչ որ ամենուս բաղձանքն ու փափաքն է միակ:

Ազգային թերթերու մէջ, Սանասարեանի շուրջ՝ բաւական թեր ու դէմ հրատարակութիւններ և կարծեաց փոխանակութիւններ եղած են ասկէ առաջ. մասնաւորապէս «Բիւզանդիոն», «Արե-